

ԿԱՐԾԻՔ

ՊԵՏՏՐՈՍՅԱՆ ԼԻԱՆԱ ՌՈՒԲԵՆԻ

«ՆԵՐՔԱՂԱՔԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ
ՄԱՀՍՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(2005-2013թթ.)» թեմայով թեկնածուական ատենախոսության
վերաբերյալ

Նախ կցանկանայի ողջունել Հայաստանի հարևան և
ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող երկրի՝
ժամանակակից Իրանի ներքին քաղաքականության վերաբերյալ
ատենախոսության պաշտպանության փաստը:

Ատենախոսությունը առանձնահատուկ է մի քանի
առումներով: Առաջինը, թեման ունի կարևոր նշանակություն
Իրանի ներքաղաքական գործընթացների իմացության աստիճանը
բարձրացնելու, ինչը հիմնարար նշանակություն ունի այդ երկրի
նկատմամբ մեր արտաքին քաղաքականության ճշգրիտ
իրականացման համար: Երկրորդ, Իրանի նման առանցքային
երկրի ներքին քաղաքականության ուսումնուսարիությունը
հնարավորություն է տալիս հստակեցնել որոշումների կայացման
մեխանիզմներն ու մասնակիցներինների շրջանակը, վերլուծել
քաղաքական ուժերի դասավորությունն ու ազդեցության
ուղորտները, շահերն ու առաջնահերթությունները: Առանց
վերոհիշյալը հաշվի առնելու և մանրամասն վերլուծության
անհնար է կանխատեսել Իրանի զարգացման հեռանկարները և
նրա հնարավորությունները միջազգային ասպարեզում: Եվ
վերջապես, որպես Հայաստանի հարևան մեծ երկիր, Իրանում
տեղի ունեցող ներքին զարգացումները անուղղակի, իսկ երբեմն էլ
ուղղակի ազդեցություն ունեն ՀՀ ազգային անվտանգության
ապահովման վրա: Ճիշտ այնպես, ինչպես Իրանի դեմ սահմանված
միջազգային պատժամիջոցները բացասաբար են ազդում ՀՀ
տնտեսության, ինչպես նաև հայ-իրանական տնտեսական
համագործության զարգացման վրա:

Մ.Ահմադինեժադի ներքին քաղաքականությունը մեզանում
դեռևս գիտական հետազոտության չի ենթարկվել, չնայած մի շարք
կարևոր զարգացումների թե Իրանի ներքին կյանքում և թե

արտաքին քաղաքականությունում: Այդ իմաստով Լիանա Պետրոսյանի կողմից ներկայացված «ՆԵՐՔԱՂԱՔԱՔԱԿԱՆ ԻՐԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2005-2013ԹԹ.)» թեկնածուական ատենախոսությունը, գալիս է շատ տեղին լրացնելու այդ բացը:

Պետք է խոստովանել, որ Լիանա Պետրոսյանի ներկայացված ատենախոսության թեման բավականաչափ ծավալուն է և մի աշխատության մեջ դժվար է ներկայացնել Իրանի ներքաղաքական բոլոր հիմնախնդիրները ու թեև աշխատանքը սահմանափակվում է Մ.Ահմադինեժադի կառավարման տարիներով, այնուամենայնիվ հեղինակից պահանջվել է համապարփակ անդրադարձ բազմաթիվ հարցերին, որոնք առնչվում են երկրի “ներքաղաքական իրադրությանը”: Այդ իմաստով հարիկ է ընդգծել, որ ատենախոսին մեծապես հաջողվել է կատարել իր առջև դրված գիտական խնդիրը:

Դրվատանքի է արժանի նաև այն, որ ատենախոսության մեջ ներքին քաղաքական խնդիրների լուսաբանման հետ մեկտեղ, չեն անտեսվել էթնիկ խնդիրները Իրանում, ինչպես նաև առանձին ենթաբաժին է տրամադրված պանթուրքականության խնդրին, իրանահայ համայնքին ու Հայոց ցեղասպանության խոսույթին:

Հատկապես ողջունելի է դիսերտանտի կողմից քրդական հիմնախնդրից զատ անդրադարձը Թալիշ նահանգի ստեղծման աշխարհաքաղաքական մեծ նշանակություն ունեցող ծրագրին, ուր ներկայացված են վերջինիս հետ կապված ներքաղաքական պայքարի մանրամասները, պատմական հենքն ու իրականացման հնարավորությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների և ենթամասերի, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկերից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորում է թեմայի արդիականությունը, նրա գիտական ուսումնասիրության մակարդակը, ժամանակագրական սահմանները, հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքը, նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլխում, որը վերնագրված է “Մ.Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանը (2005-2009)” ներկայացվում է այդ ժամանակահատվածում Իրանի սոցիալ-քաղաքական և տնտեսական իրադրությունը: Գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

“Սոցիալ-քաղաքական իրադրությունն Իրանում Մահմուդ Ահմադինեժադի նախագահության առաջին շրջանում” ենթագլխում ներկայացվում են 2005թ. նախագահական ընտրություններին ընդառաջ Իրանում տիրող սոցիալ-քաղաքական իրադրությունը, Մ.Ահմադինեժադի սոցիալական, քաղաքական ու ռազմական հենարանը, գնահատականներ են տրվել նախագահության առաջին շրջանում նրա վարած քաղաքականության արդյունավետությունն ու բացթողումները:

“Տնտեսական իրադրությունն ԻԻՀ Մ.Ահմադինեժադի կառավարման առաջին շրջանում” ներկայացվում է այդ ժամանակահատվածում Իրանի տնտեսության ընդհանուր պատկերը: Այստեղ հեղինակը ընդգծում է, որ չնայած “նախընտրական քարոզարշավի ընթացքում դեռևս թեկնածու Մ.Ահմադինեժադի առաջ քաշած տնտեսական բարենորոգման ծրագրերը նպաստել էին վերջինիս հաղթանակին, այսուհանդերձ նախագահության առաջին շրջանի ավարտին երկրում բավական բարդ տնտեսական իրադրություն էր ստեղծվել: Դիսերտանտը նաև նշում է, որ հենց տնտեսական քաղաքականության շուրջ և Իրանի տնտեսության վերականգնման վերաբերյալ առաջին հակասությունները ի հայտ եկան երկրի Հոգևոր առաջնորդի Ա.Խամենեյի և Մ.Ահմադինեժադի միջև:

Անհրաժեշտ ենք համարում հատուկ ընգծել, որ “Իրանական ազգայնականության խոսույթը Մ.Ահմադինեժադի կառավարման տարիներին” *երրորդ ենթագլուխը ատենախոսության կարևոր և հաջողված մասերից է*, ուր հստակ նշվում է Իրանի ներքին քաղաքականության մեջ ազգայնական գաղափարների ներմուծման ուղղությամբ Մ.Ահմադինեժադի վարած քաղաքականության մասին, որպես իսլամական կառավարման համակարգի հետ համադրելու փորձ՝ հավասարակշռելու և լրացնելու քաղաքական դաշտի այդ շոշափելի բացը՝ հավասարի նշան դնելով կրոնի ու ինքնության միջև:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «Մահմուդ Ահմադինեժադի նախագահության երկրորդ շրջանը /2009-2013/» և բաղկացած է երեք ենթագլխից:

«Մ.Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները. Կանաչ շարժում» առաջին ենթագլխում ուսումնասիրվում են Իրանում սկիզբ առած «Կանաչ շարժման» դրդապատճառները, ընթացքն ու գաղափարական հենքը: Հեղինակը շարժման ծագման պատճառներից նշում է նոր ընտրություններից հետո ստեղծված ներքաղաքական իրավիճակը, երբ գնալով սրվում էին հակասությունները մի կողմից ԻԻՀ կառավարության և հասարակության լայն շրջանակների միջև, իսկ մյուս կողմից էլ աստիճանաբար լարվում էին ԻԻՀ Հոգևոր առաջնորդի և նախագահի միջև: Ենթագլխում Կանաչ շարժման ընթացքը բաժանված է երեք փուլի. Քաղաքային, երբ Թեհրանում ակտիվացել էին միջին խավի և երիտասարդության բողոքի դրսևորումները, հետընտրական, երբ դժգոհ բնակչությունը սկսեց բացահայտ անհնազանդություն ցուցաբերել, բողոքարկելով ընտրությունների արդյունքները և համարեց դրանց կեղծված և պառակտման, երբ իշխանությունները հետզհետե բռնաճնշման ենթարկեցին շարժումն ու նրա ղեկավարներին:

Նույն գլխի երկրորդ ենթաբաժինը, որը վերնագրված է «ԻԻՀ-ում համակարգային փոփոխության ուղղված Մ.Ահմադինեժադի քաղաքականությունը» մանրամասն անդրադառնում է երկրի ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցող բացասական գործընթացներին, մասնավորապես երկրում մարդու իրավունքների վատթարացման, կապված իշխանության ծայրահեղական թևի ակտիվացման ու այսպես կոչված «Բալամական երկրորդ հեղափոխության» գալստյան, ինչպես նաև «Մշակութային երկրորդ հեղափոխության» գաղափարների ներքո կառավարության գործունեությանը, ինչը հավելյալ լարում էր մտցնում երկրի վերնախավում և, ըստ հեղինակի, ակնհայտորեն միտված էր Իրանի հասարակության աչքերում նվազեցնել հոգևորականների դերը և ամրապնդել Մ.Ահմադինեժադի դիրքերը: Դիսերտանտը հատուկ շեշտում է, որ Մ.Ահմադինեժադը Իրանի առաջին նախագահն էր, ով բացահայտ հակադրվեց կրոնական համակարգին և փորձեց հոգևոր վերնախավից վերցնել բարձրագույն իշխանության լծակները:

«Իրանական միջուկային խնդրի ազդեցությունն ԻԻՀ ներքաղաքական իրադրության վրա ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների համատեքստում» չափազանց ուշագրավ ենթագլուխ է, ուր հեղինակը փորձում է քննության ենթարկել Իրանի միջուկային ծրագրի և ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների ազդեցությունն ԻԻՀ ներքին քաղաքականության և տնտեսության վրա:

Ատենախոսության մյուս ենթագլուխները նվիրված են Իրանի ներքաղաքական կյանքի կարևորագույն հիմնախնդիրներին՝ էթնիկ, քրդական, պանթուրքական, ինչպես նաև ԻԻՀ-ում Թալիշի նահանգի ստեղծման ու Հայոց ցեղասպանության խոսույթներին: Հարկ է խոստովանել, որ մեզանում տարբեր պատճառներով հարևան Իրանի ներքաղաքական վերոհիշյալ հիմնախնդիրները պատշաճ կերպով լուսաբանված ու հետազոտված չեն: Ներկայացված սույն կարծիքի սկզբում արդեն ողջունել էինք ատենախոսի կողմից նման խորքային հիմնախնդիրների ուսումնասիրության փորձը, ինչն անվարան ներկայացված աշխատանքի գիտական անհերքելի նորույթներից է:

Հատուկ անհրաժեշտ է անդրադառնալ ատենախոսության **Եզրակացություններ** բաժնում ամփափված եզրահանգումներին, ուր միանգամայն իրավացիորեն շեշտվում է Մ.Ահմանիդեջադի դերը ազգայնականությունը Իրանի քաղաքական օրակարգերից մեկը դարձնելու գործում, նախագահի պոպուլիստական գործելաոճը և տնտեսության համար նրա վարած տնտեսական քաղաքականության բացասական հետևանքները: Հեղինակը շատ դիպուկ նշում է, որ «Ահմադինեժադը իր մասին չեզոք կարծիք չի թողնում. Նա կամ սիրված և ընդունված է, կամ մերժված ու ատելի», իսկ միջազգային քաղաքականության ասպարեզում առավել «հետաքրաշարժ ու ճանաչելի դեմքերից մեկն է»: հեղինակը չի մոռանում նաև ընդգծել այն հանգամանքը, որ Ահմադինեժադը «միշտ եղել է արտակարգ հմուտ պոպուլիստ՝ առանձնահատուկ տաղանդով. Որն արտացոլում էր Իրանի՝ սոցիալապես ցածր կենսապայմաններ ունեցող խավի զանգվածային մտահոգություններն ու ձգտումները»:

Աշխատության աղբյուրագիտական հենքը հիմնականում

կազմում են հայերեն, պարսկերեն, ռուսերեն և անգլերեն սկզբնաղբյուրները:

Հետազոտությունը իրավամբ կարելի է համարել նորույթ հայրենական արևելագիտության մեջ, քանի որ այն անդրադառնում է ժամանակակից Իրանի ներքին քաղաքական իրադրությանը, ինչը միանգամայն նոր, պահանջված և ողջունելի փորձ է:

Այսուհանդերձ կցանկանայինք ներկայացնել հետևյալ դիտողություններն ու նկատառումները.

- Ատենախոսության Սեղմագրի մեջ բացակայում է հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հարցի ուսումնասիրության աստիճանը, թեև ատենախոսության **Ներածության մեջ** առկա է աղբյուրների և գրականության տեսության վերլուծությունը:
- Ատենախոսության մեջ որպես Մ.Ահմադինեժադի վերելքի հիմնական գործոն իրավացիորեն նշվում է Իրանի Հոգևոր առաջնորդի աջակցության մասին: Սակայն կարծում ենք տեղին կլինե՞ր նաև նշել այն, որ Մ. Ահմադինեժադի սերտ կապերը Իրանի Հեղափոխական ԶՈՒ -ի /Բասիջ և Հեղափոխության Պահապանների Կորպուս/ դեռևս մինչ Թեհրանի քաղաքապետ նշանակումը և դրանից հետո նույնպես մեծ դեր խաղացին նրա **ընտրության գործում**, ինչը փոխադարձվեց Մ. Ահմադինեժադի կողմից սեփականաշնորհման գործընթացում, երբ հաշվի առնվեցին նրանց շահերը՝ էլ ավելի ամրապնդելով վերջինիս դիրքերը երկրում: Թեև հեղինակը միանգամայն տեղին նկատել է, որ արդյունքում “Հեղափոխական գվարդիան ակտիվորեն ներգրավվում է Իրանում տնտեսական ու ֆինանսական ցանկացած գործողության մեջ”, սակայն հստակ չի եզրահանգում, որ այդ հանգամանքը առավել դժվարեցնում էր ոչ միայն Ահմադինեժադի ներքին քաղաքական բարեփոխումների իրականացումը, խոցելի դարձնում նրա ներքաղաքական դիրքերը, այլև՝ նվազեցնում թե ներքին և թե արտաքին ճակատում նախագահի համար այդքան անհրաժեշտ ճկունության և խուսավարման հնարավորությունները:
- Քաջ հայտնի է այն, որ արտաքին քաղաքականությունը ներքինի շարունակությունն է կամ, որ “արտաքին

քաղաքականությունը սկսում է տանը”: Ուստի, ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ հստակ ցույց տրվեր երկրի ներքաղաքական զարգացումների ազդեցությունը Մ.Ահմադինեժադի արտաքին քաղաքականության իրականացման ընթացքի վրա: Այն բազմաթիվ դրսևորումները, երբ ներքաղաքական կոնսոլիդացիայի համար կամ ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու նպատակով առավել ուժգնանում է արտաքին քաղաքական դաշտում “թշնամու” կամ “թշնամիների” թիրախավորումն ու զուգահեռ՝ կոշտ հռետորաբանությունը: Այս իմաստով, աշխատանքը կհարստացնէր հատկապես նման ներքին և արտաքին քաղաքականությունների “փոխկապակցվածության” /linkage/ առավել խորը ուսումնասիրությունը ու դրա ազդեցությունը հատկապես Իրանի միջուկային ծրագրի հետ կապված Ահմադինեժադի վարած արտաքին քաղաքական մարտավարության վրա:

- Ատենախոսության սեղմագրի վերջում /էջ.20/ հեղինակը նշում է, որ “... հենց Մ.Ահմադինեժադի... կոշտ հռետորաբանություն էր, որ նպաստել էր, որ ԱՄՆ-ը և Արևմուտքը, գիտակցելով կոշտ քաղաքականության անարդյունավետությունը, զիջումների ճանապարհով նոր հարաբերություններ ձևավորեին իրանական հաջորդ կառավարության հետ”: Ամերիկացի ականավոր դիվանագետ Վիլյամ Բըրնսը, որ ներկայումս զբաղեցնում է ԱՄՆ ԿՀՎ պետի պաշտոնը և 2013թ. սկսած անմիջական մասնակցություն է ունեցել Իրանի հետ բանակցություններում Օմանում իր “Անտեսանելի ուժ. Ինչպես է աշխատում ամերիկյան դիվանագիտությունը”¹ գրքում նշում է ամերիկյան վարչակազմի և մասնավորապես նախագահ Բ.Օբամայի Իրանի միջուկային ծրագիրը կասեցնելու հարցում միմիայն դիվանագիտական միջոցներով կարգավորելու հստակ հանձնառության և վճռականության մասին, հատկապես Մերձավոր Արևելքում 2011թ. հետո հաստատված “արաբական ձմեռից” հետո: Այդ իմաստով Իրանում նոր “չափավոր”² նախագահ Հ.Ռուհանիի ընտրությունը միայն բացեց

¹ William J. Burns. The Back Channel. A Memoir of American Diplomacy and the Case for its Renewal. New York, 2019

² “Moderate” նույն տեղում:

դիվանագիտական համաձայնության հասնելու /2015թ. հուլիսին/ այն հնարավորության “պատուհանը”, որը բնականաբար չէր կարող իրականացնել Մ. Ահմադինեժադը իր վարած ներքին և արտաքին քաղաքականությամբ:

- Եվ վերջապես, ատենախոսությունը մեծապես կշահեր եթե անդրադարձ կատարվեր նաև հայ-իրանական հարաբերություններին, գոնե տնտեսական մասով /գազատարի շինարարություն, Արաքսի ՀԷԿ և այլն/, ինչպես նաև հակիրճ ներկայացվեր Իրանի քաղաքականությանը Հարավային Կովկասում Մ.Ահմադինեժադի կառավարման տարիներին:

Այսուհանդերձ պետք է արձանագրենք, որ Լիանա Պետրոսյանը ներկայացրել է արժեքավոր գիտական աշխատանք, որը գրված է պատշաճ մասնագիտական մակարդակով, վերլուծական անհերքելի ունակությամբ ու հստակ տրամաբանական եզրահանգումներով:

Հաշվի առնելով վերոհիշյալը, հնարավոր ենք համարում բավարարել Լիանա Պետրոսյանի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու հայցը:

Ընդդիմախոս՝

Ռուբեն Կարապետյան, պ.գ.դ., պրոֆեսոր

18.06.2022

ՀՀ գԱԿ Արևիկոսյանի վարչակազմի 006 համարից հետո պարզապես կարելի չէր գնահատել, պ.Տ.Ր. ուղեկ Գ.Վ. Բարսեղյան

